ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հ.Սմբատ ՍՊԸ-ն ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
20	Աշխատանքային աթոռը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Աշխատանքային աթոռի մետաղական կմախքը պետք է պատրաստված լինի մետաղական սնամեջ օվալաձև խողովակներից՝ (30 x 15 x 2.0 մմ), հնարավոր է նաև խողովակը լինի երկու կողմերից հավասրաչափ սեղմված և ունենա կլորացված ուղղանկյան ձև: Աթոռի մետաղական կմախքի զոդման կարանները պետք է լինեն լավ մշակված, ողորկ և փոշեներկված բարձրակարգ սև գույնի էկոլոգիապես մաքուր ներկանյութով: Նստելատեղի բարձրությունը հատակից 450 մմ, թիկնակի բարձրությունը հատակից 800 մմ: Նստելատեղի չափսերն են՝ 420x385 (առնվազն) ;Թիկնակը և նստելատեղը պատրաստված լինեն առնվազն 10 մմ հաստության նրբատախտակից, որին դիմացից ամրացվում է

	առնվազն 20 մմ հաստության և 25 կգ/մ3 խտության սպունգ, իսկ հետևի մասում՝ 10 մմ հաստության և 25 կգ/մ3 խտության սպունգ։ Թիկնակը և նստատեղը պետք է երեսպատված լինեն հաստ, որակյալ, ամուր, մաշակայուն կտորով։ Նստելատեղը և թիկնակը առանձին են իրարից։ Թիկնակի վերևի հատվածում և մետաղական և փայտային մասերը ունեն կիսաշրջանի, օվալաձև տեսք։ Թիկնակի պաստառապատված մասի չափերն են 400 մմx 300 մմ։ Ոտքերի եզրեը(ծայրերը) պետք է խցանված լինեն պոլիմերային սև գույնի խցաններով, որոնց կողային պատերի հաստությունը՝ 2 մմ, տակի մասինը՝ 4-6 մմ։ Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն)։ Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով։ Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն։ Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով։ Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը։ Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում)։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Հ.Սմբատ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
20	